

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՄԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Rev. Pere G. Kalemkarian
M. 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուլխարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Առատահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆՈՒԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ զրամ եղայն որդի հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՐՆԱ (ՊՈՒԼԿԱՐԹԻ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ողղեալ գրութիւնք
էս չեն որդուիր եւ յարմար դաստիարակ-
ները միայն կը հրատարակուին անորո-
շովիս կամ մասամբ.
Դանուցման տոը 20 սանթիմ. երե-
փեկ անգլի անգլաներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

ԻՐԱՐ ՀՍՍԿՆԱՆՔ

Հրոպարակը տաղնապի մէջ է:
Տեղական եւ այլ թերթեր, զիրար
բազմապիսի համար պղծողի կէտի մը
կը նային: Ժողովուրդին հետա-
քրքրութիւնը լարուած է դեր ու
դէմ յօդուածներու վերելումին:
Ասիկա է մամուլի դերը սակայն:
Մամուլի դերին ըմբռնումը,
վերապահումը է այն մարդերուն,
որոնք, բարձր հոգիով ու միտ-
քով, կը նետուին այդ ասպարէ
դը, ու ժողովուրդը անցնելու
հասարակութեան հո-
գիքն:

Ահաւասիկ արեւնը, ահաւասիկ
հազարաւոր մարտիրոսներ. մա-
մուլի ներկայացուցիչները կը-
զգա՞ն արդեօք թէ աւելի քան եր-
բէք ծանր է հիմա իրենց գործը,
թէ՛ իրենց պարտքն է պատրաս-
տել ժողովուրդը իրական յեղափո-
խութեան, որ պատմական նոր
չլին մը պիտի բանայ մեզի:

Մերկայցնել անբարոյականու-
թիւնները, որոնք, յեղափոխու-
թեան դիմակին տակ, օձի խլը-
տուներ կուրհանան, մերկայցնել
չահասիրութիւնները յեղափոխու-
թեան շապիկին մէջ՝ հարուածել
կեղծիքը, խարաղանել վրասակա-
րը, — արդարեւ մամուլին գործն է:

Ազգային աշխարհի փափուկ
ճգնաժամի մը մէջ, ինչպիսին է
հիմա, երբ մամուլը չըզրադիր
այդ տեսակ խնդիրներով, ինչ է
ուրեմն անոր դերը:

Սակայն, ինչ որ ցաւալի է,
մենք միշտ սխալ հասկցած ենք
քննադատութիւնը: Թերթ մը,
որ օրինակի՝ համար, կը ձաղկէ
անձերը, որոնք յեղափոխութիւնը
կը շահագործեն, մեզի անհասկ-
նալի կը մնայ: Կը կարծենք թէ
այդ միտքային թերթը յեղափո-
խութիւնն իսկ ձաղկած է ու կը-
սկսինք կեղծ մոլեռանդութեան
փրփուրներ թափել անոր վրայ:

Ահաւասիկ ինչ որ կը խնդրեմ
— հասկնա՞նք իրար:

Մեր գոյութիւնը պահպանելու
համար չը խաճանք անկեղծն ու
ճիշդը. պղծող, աննշան դէպքեր
պատճառ չըլլան մեզի, որպէս զի

իրարու դէմ յարձակինք. լուրջ,
թէեւ ըլլայ նախառաջիկ յօդուա-
ծին դէմ փառտիրով, եթէ կրնանք
կուրհանք, անոր ապտակող շեշ-
տերէն մեր կեղծ յեղափոխականի
գոյութիւնը խախտու զգալով,
անձնական ուրի կայծեր չը ժայթ-
քենք:

Հասկնա՞նք իրար, չը շահա-
գործենք ժողովուրդին ներկայ
անստոյգ դրութիւնը, և մանա-
ւանդ հասկնա՞նք այն դերը, որ
պէտք է ունենայ ո՛ր և է մամուլը,
եթէ չուզիր, լրագրութեան պատ-
մութեան մէջ, սինդրոր լորձուք
մը ձգել:

ԱՐԴԱՐ ՊԱՆՈՒՅ ՄԸ

Հանրածանօթ իրողութիւն մըն է
թէ այս պահին պատուիրակներուն մի-
աձայն քուէալը կաթողիկոս ընտրուած
Հայոց Հայրիկը իր ընտրութիւնէն քիչ
եսքը ունեցաւ Ռուսահայերու մէջ հա-
կառակորդ կուսակցութիւն մը որ միշտ
առիթ կը փնտռէ զայն քննադատելու
եւ դատաւիտելու: Այս կուսակցու-
թիւնը, որուն օսկանն է Մշակ, եւ
որ մինչեւ հիմայ սահմանափակուած կը
մնար Կովկասի հայութեան չըջանալին
մէջ, կը միտի հիմայ հիմ ձգել ուրիշ
տեղեր ալ եւ հասնել մինչեւ Եւրոպայի
հայ գաղութները, Ռուսահայերու կամ
անոնց հետ չփոխ ունեցողներու ձեռ-
քով:

Հակախրիստոս հոսանքը Պուլխարա-
հայերու մէջ ալ մտնելու փորձ մը
կարելի է նկատել: Շարժումի 8րդ
թիւին «Օղակէն դուրս» խորագրով
նախապօղտածին մէջ Հայրիկի դէմ ե-
ղած կծու ակնարկութիւնները:

Յօդուածագիրը, Շաւասպ, կըսէ թէ
հայ ժողովուրդը երբեմն անտարբեր
չէր Հայրիկի, վասն զի նոյն իսկ եկե-
ղեցիին մէջ եւ անկէ գուրս հայրենիքի
մարդն էր Հայրիկ. բայց երբ տեսաւ
որ իր կաթողիկոսութեան օրով էջմի-
ածնի պատուարները չեն կրնար իրենց
մէջ ամանել տաքսիտ հոգեւորականներ
եւ Արիստակէս Սեդրակեան ու Լեւոն
Խոճայեան կը փախչին Եւրոպայէն որ
այսպէս կը փոքրկանայ եւ կրօնական
մթութեան մէջ կը կծկուի գաղաւթած
օձի մը պէս, նոյն ժողովուրդը այսօր
իր սիրան ու սէրը կը դարձնէ ա՛լ շատ
հեռու տեղեր:

Մեզի կերեւայ թէ դէթ առայժմ
անստեղծ է Հայրիկի նկատմամբ բոլոր
ժողովուրդին վերագրել այսքան ան-
նպաստ տրամադրութիւն մը որ, որչափ
մենք գիտենք եւ ինչպէս արդէն ը-

սինք, գոյութիւն ունի Մշակի դրօշա-
կին տակ խմբուած ռուսահայ կուսակ-
ցութեան մէջ միայն Սակայն այս չէ այն
կէտը որուն վրայ մենք ծանրանալ
կուզենք: Մեր փափագն է հակախրիս-
տաներէ լսել այն լուրջ պատճառները
եւ փառտիրը որոնցմէ կը ծագի իրենց
հակակրօնութիւնը Հայրիկի դէմ:

Անոնք պարտական են ժողովուրդը
այս խնդրին մէջ լուսաւորելու, քանի
որ Մշակականներու ուղղութեան ճամ-
բայ հարթել կուզեն մեր մէջ ալ:

Պուլխարահայ ժողովուրդը տեսաւ,
այո՛, թէ Հայրիկ չ'յաջողեցաւ պսակել
այն գեղեցիկ յոյսերը, որոնք դրոշա-
ցան իր վրայ, երբ բարձրացաւ Հայրա-
պետական Աթոռը. սակայն այս անյա-
ջողութեան միակ պատճառը կը կարծէ
տեսնել Կաթողիկոսին կամքէն բոլոր-
ովին անկախ արտաքին, աննպաստ
հանգամանքներու մէջ, որոնց համար
հետեւապէս ո՛ր և է պատասխանատու-
ութիւն չի ծանրանար Եւրոպայի վրայ
ու Վասպուրականի Արծիւը կը մնայ
միշտ Հայոց Հայրիկը:

Եթէ սխալ է այս կարծիքը, եթէ
Հայրիկ յիսնամեայ գործիւթեանէ հու-
քը դրժած է իրօք իր անցեալին, ին-
չպէս է թերութիւններու մէջ, գործած
է անսիրտի սխալներ, պէտք է որ ա-
մէնքս ալ գիտնանք ու համոզուինք:
Դառն յուսախաբութիւն մը պիտի ըլ-
լար այս հայ ժողովուրդին համար, սա-
կայն ճշմարտութիւնը պէտք է երեւան
գայ, որքան ալ ցաւալի եւ տխուր
ըլլայ այն:

Երկուքին մէկը. կամ Հայրիկ անա-
ղարտ է, եւ միեւնոյն ազգասիրական
խանդավառ զգացումներով տողորուած,
եւ այն ատեն ոչ ոք յանդգնելու է
հայրենանուէր մեծ դէմքի մը վրայ
ստուեր ձգելու, կամ, Հայրիկ յանցա-
ւոր է, եւ այն ատեն ժողովուրդը զաղ-
րելու է խաբուսիկ կուռք մը պսշ-
տել:

Շաւասպի բացատրութեանց կըս-
պասենք առանց կանխապէս կարծիքի
եւ միայն ճշմարտութեան վերահասու
ըլլալու փափագով: Իրաւունքի էջերն
ալ բաց են իրեն համար, այնքան ան-
կեղծ է մեր այս փափագը:

ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱՌՈՂԻԿՈՍԸ

Բիւզանդիոնի մէջ կը կարգանք
թէ Կիլիկիոյ կաթողիկոսութեան
խնդիրը լուծուել է խառն ժողո-
վոյ փետր. 20 նիստին մէջ, ուր
Տ. Գրիգորիոս տրքեղ. Ալէքսիան
նի ընտրութիւնը ձեւական թե-
րութեանց համար բեկանուելով,
նոր ընտրութիւն մը կատարելու
պաշտօնը յանձնուել է Երուսա-

ղէմի լուսարարապետ Տ. Սահակ
Եպս. Խապայեանի:

Պատրիարքարանը ասով հսկայի
քալ մ'ալ կառնէ իր ընտրած զի-
չողական ճամբուն մէջ Դրան հան-
դէպ՝ անշուշտ նորանոր խոստում-
ներու փոխարէն որոնց միակ թե-
րութիւնը իրենց անգործագրելի
մնալն պիտի ըլլայ, ինչպէս իրենց
նախորդները: Նոյն լրագիրը քանի
մը օր ետքը Պատրիարքարանէն
պաշտօնապէս իրեն հաղորդուած
տեղեկութեան մը համեմատ կը
ժանուցանէ թէ խառն ժողովի վե-
րոյշեալ նիստին մէջ Կիլիկիոյ
կաթողիկոսական ընտրելիութեան
վրայ խօսք կամ առաջարկ չէ եւ
լաժ եւ թէ Տ. Սահակ Կաթիկ.
Խապայեանի ընտրելիութեան վը-
րայ տարածուած լուրը սխալ է:

Կը հետեւի թէ ժողովը միայն
Սրբազան Ալէքսիանի ընտրու-
թիւնը բեկանել է: Արդէն այդ
էր էական կէտը՝ ազգին իրա-
ւունքներուն և շահերուն տեսա-
կէտով, զոր Պատրիարքարանը կը
լքէ բոլորովին տեղի տալու համար
բարձրագոյն կամքի մը որուն առ-
ջեւ խոնարհիլն է արդի Կեղը.
վարչութեան մտահոգութեանց մե-
ծագոյնը: Թողունք վարչութեան
բաշա և էֆէնտի անդամները, սա
երանելի պատրիարքը՝ նկատի առ-
նելով իր անօգուտ եւ հետեւապէս
աւելորդ պաշտօնավարութիւնը,
ինչո՞ւ գոնէ հրաժարելու քաջու-
թիւնն ու մեծաննութիւնը չու-
նենար:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Սօֆիա 27 փետր.

Փետր. 19ը, Սան-Սթեֆանօի դաշ-
նագրութեան կնքումին օրը՝ տօնե-
ցինք սովորական հանդէսով: Դիտա-
ւորութիւնս չէ հանդէսը նկարագրել
որ ըստ սովորականին կը բաղկա-
նար գոհաբանական աղօթքէ, ապա
գործանդէսէ եւ երեկոյեան լուսավա-
ռութենէ, այլ կուզեմ վեր հանել հան-
դիսին յարակից ուշադրաւ հանգամանք-
ներ որոնք ուրիշ տարիներ տեղի չէին
ունենար:

Նախ՝ սովորականին հակառակ, այս
տարի ռուսական հիւպատոսը միայն
հանդէսին ներկայ էր իրեն ստորա-
կարգեալներով եւ հիւպատոսարանին
մէջ ընդունեց բարձրաստիճան պաշ-

տօնաներու երախտագիտական յայտարարութիւնները:

Անցեալ տարի Մակեդոնական ընկերութիւնը հանդէսին փայլն աւելցնելու համար ուղեց զբոլակ պարզած եւ նուազով պարտիլ քաղաքին մէջ. ուստի կանուխը արդիւնց պտոյտը, իսկ այս անգամ ոչ միայն Մակեդոնացիները մասնակցեցան հանդէսին, այլ եւ ցոյց մը ըրին անարգել: Մօտ 2000 Մակեդոնացիներ, զանազան դասակարգէ՝ հաւաքուելով խմբովին անցան պալատին առջևէն եւ գնացին կրօնատէր Գօրիս (Պօլիս իշխանին անուան նուիրուած՝ քաղաքին ամենէն ընդարձակ պարտէզը) ուր անդի ունեցան կրակոտ ճառախոսութիւններ:

Այս թոյլտուութենէն կը հետեցնեն որ կառավարութիւնը մտադիր է յուզել Մակեդոնական խնդիրը եւ լրջօրէն պահանջել Բ. Դոնէն որ բարեօք Մակեդոնիոյ վիճակը. այս կարծիքին հաստատութեան համար մէջ կը բերուի Կ. Պօլսոյ պուլկար զինանախակաւ գործակատարին երկիցս Դրան ծանուցադիր տալը Մակեդոնական խնդրին մասին:

Սակայն միւս կողմէ պէտք է սա ալ յիշատակել որ զինուորական ատենան մը կազմուեցաւ որուն պաշտօնը պիտի ըլլայ եղբ քառեղ այն զինուորականները եւ քաղաքացիները որոնք մէկ երկու ամիս առաջ Պուլկարիայէն Մակեդոնիա անցնելով՝ իբր թէ հոն գըզդուութիւն առաջ բերին եւ արդի խառնաշփոթ վիճակին պատճառ եղբ եւ, ինչպէս թիւրք կառավարութիւնը կը պնդէ:

21/2 տարի առաջ ալ պուլկարաբերնակ Մակեդոնացիներ եւ մէկ քանի սպաներ թուրք սահմանազուլը անցնելով՝ այնտեղ կուտեցան. բաւական թիւով մարդիկ, յորս նաեւ սպաներ, մեռան: Թէեւ նախ կարծուեցաւ թէ կառավարութիւնը համախառն էր այս ձեռնարկին, բայց յետոյ անոր մասնակցող սպաներ արտաքսուեցան բանակէն, զինուորներ ու քաղաքացիներ պատժուեցան եւ ի գուժը գնաց թափուած արիւնը: Արդեօք այս անգամ ալ նոյն վայրէջանին պիտի յանգնէ գործը: Փախազելի էր որ ասանկ չըլլար եւ կառավարութիւնը լուրջ միջոցներ ձեռք առնէր Մակեդոնիոյ վիճակին բարեօքման համար, որով դուցէ ալ կարգը մեզի դար, որովհետեւ այնպէս կերեւայ որ Կրէտէի եւ Մակեդոնիոյ խնդիրները չի լուծուած կարգը չպիտի գայ Հայկականին, եթէ անակնկալ պարագաներ չի յեղաշրջեն կացութեան արդի երեւոյթը:

ՀԱՆԴԵՍԻ ՄԷՋ ՎԷՃ

Եթէ մեր Փ. Պօլսեցի ազգայինները վարդանանց հանդէսը կուրծով ու աւերճանակի հարուածներով վերջացուցին, Սիւրիսթեցիներն ալ նոյն ատիւթով բանակուի մը հանդիսատես ըլլալու տեսլար հարկին մէջ գտնուել են: Ահաւորիկ ինչ որ կը գրեն մեզ այս մասին Սիւրիսթեցէ:

Ուրիշ տեղերու պէս մեր քաղաքն ալ տօնեց վարդանանց հանդէսը, որուն կը նախագահէր պատարագիչ Տէր հայրը եւ որուն մասնակցեցան գաղթական ու տեղացի երկսեռ բոլոր ժողովուրդը եւ զարոցի աշակերտներն ու աշակերտուհիները: Այս վերջիններուն ներդաշնակ երգերը յուզեցին հանդիսականներու սիրտերը:

Սակայն վարժարանին ուսուցիչը, Արմաշի դպրեւանքին կի-

սաւարտ սան, բազմութեան խանգարման ժամանակները անախորժ կերպով կ'ստեղծուէր իր մէկ բանախօսութեամբ ուր ուրիշ բաներու հետ սա ալ բաւական չէր լինէր զուտ կըզերական տ'ստեղծուէր անխորաւ: Բար վարդանանց խորհրդացոյցած ու վատար վար զարկած է, մինչդեռ վատարի դերը շատ աւելի բարձր ու քաղաքագիտական եղած է, եւ թէ՛ եթէ վարդան վատարին անտար, Հայաստան շատ պիտի շահէր: Այս եւ նման կարգ մը խօսքեր հանդիսականներուն զայրոյթը գրգռեցին եւ ատենախօս պարտնը ստիպուեցաւ բազմիցս ներողութիւն խնդրելով վերջ տալ իր պաշտօնական խօսքին, սրոյց, պէտք է տեսնել, կընկերանային անձանց շարժումներ, ձեռքի անընդհատ գործեր եւ ոտքի թափեր:

Յաջորդ բանախօսը, Տ. Ղազարոս Նահապետեան, խօսեցաւ վարդանանց պատմութիւնը նշանակութեամբ մտախնդիր եւ նախընթաց տեսնախօսին ակնարկելով ըսաւ թէ վարդանանց պատմութիւնը նման է իր դար առաջ կատարուած ողբերգիւն-կրօնական միւս դէպք մը ոյսօր դատաւիտել եւ վատար կը վարդանանց գերադասեց յայտարարել իր տեսնեց ճամուկերը եւ զօրութիւն տ'ստեղծուէր անմոռութիւն է եւ թէ ինչպէս իր անմոռ պատմութեամբ հայ ողբերգի մէջ ազգասիրական կրօնը սերունդէ սերունդ վառ պահուի պատճառ մը եղած է:

Մէկ քանի սաներ ու սանուհիներ ողբերգիւն ոտանաւորներ արտասանեցին. կարգադրուեցան նաեւ պարագային յարմար գրաւոր ճառեր:

ՍՏՐՈՒԿ

ԱՌՆՁ

Ձեռ սեւեւեր զոյն ոսկի զարկած կոտ շրջաւե, Է՛հ, ստրո՛ւկ, բա՛ց քո աչքեր եւ արափի՛ր, Ա՛ն քո սուրբ, ա՛ն քո ժակցոս հրաւրան, Թորո՛ւք շու՛ք, ազա՛ւս եղի՛ր կա՛մ Վեդի՛ր:

Այո՛, ստրո՛ւկ, ազա՛ւս եղի՛ր կա՛մ Վեդի՛ր:

Հայրենիքի հողին վրայ քաջաբա՛ւ, Ժա՛նքի մի կողմ, փոսի մը մէջ զոյն ինկի՛ր:

Բայց մի՛ ծնե՛ր քո զոյնը վասարա՛ւ:

Կոհակին պէս խիզախ եղի՛ր, կասա՛ղի,

Բա՛ց քո կուրծք, — քո անդունդնէ՛ր ահաւոր, —

Խըղդի՛, լեցա՛ւ խորհրդով մէջ ծառա՛ւ,

Արիւնք ծրծո՛ղ քո թշնամիին դարաւոր:

Դուն շա՛նք մ'եղի՛ր արդարապա՛ւս, անդո՛ղի,

Ձա՛րկ, քղկե՛ր քոնուրեան սեւ զո՛ւն:

Հեղի՛՛ք քափե՛ս քո արցունքներ ու քո զո՛ւն,

Ստրուկի ծայնն Աստուծո՛ւ անգա՛մ չը լըսե՛ր:

... Ու երբ լեցա՛ւ քո վրեժը վրեժնակա՛ն,

Երբ քո սուրբ կարմիր անդունդն կը լըսե՛ս,

Հաւաքե՛ր հայր քո քեզ տա՛ւ հրաւրան,

Մայր՝ որ ունեց քո հայրենիք միջոց սիրե՛ս:

Փ. Պօլսոյ

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Փ. Պօլսոյ 25 փետր.

Իրաւունքի 14րդ. թիւին մէջ Փ. Պօլսեան գրուած թղթակցութիւն մը կար այստեղի վարդանանց հանդէսի մասին: Իրողութիւնն էր թողութիւն խնդարութեամբ եւ Սաստիկ կը բողոքեմ իմ մասին եղած այն գրադարութեան դէմ՝ իբրեւ թէ ինձի պաշտօն յանձնուած լինի վարդանանց հանդէսին մէջ խոտովութիւն հանել՝ գաղթականները կառավարութեան առջեւ կանգնելի ցուցնելու համար: Ձեր թղթակցը փոխանակ երեւոյթների վրայ դատելու, լաւ չէ՛ր լիներ որ նախ քննէր եւ յետոյ հրապարակ հանէր այդպիսի հեշտային սուտ մը որ ապահովաբար մասնաւոր գիտումով մը հնարուած է:

Ինչպէս ամէն տարի, այս տարի ալ հանդէսը զիտելու դացեր էի: Հանդէսին վերջը, Մայր-հայրենիք գնացած պարտնը, առանց արտօնութիւն առնելու, բեմ կենէ եւ կսկի պոռպոռալ ասոր անոր դէմ: Կը պախարակէ զպարտնի վիճակը, եւ Արմէնիայի հերոք. թիւին մէջ իմ թղթակցութեանս ակնարկելով՝ կը նախատէ ազգային զբաղումները եւ անտեղ ներկայ եղող չըջանաւարտները, կը նախատէ Արմէնիան, կը նախատէ զիս անձնապէս: Միթէ կրնայի եւ պէտք է լուրջ այդ հայտնութիւնների առջեւ, միթէ թուրք զինուորներին եւ Բիւրառ աւազակներին դէմ կուտելուն համար ազգային կը համարի զինք ազգային հանդէսի մը մէջ երկու ասոր անոր դէմ նախատել ժայթքել. եւ եթէ ես իրեն զարձուցի նոյն նախատիւնը, ես միթէ՞ խոտովութեան պատճառ պէտք է համարուիմ:

Եթէ այդ պարտնը հոգաբարձութեան եւ Արմէնիայի թղթակցին հետ կարգադրելիք խնդիր մ'ունէր, միթէ՞ վարդանանց հանդէսի վայրը բնութիւն էր այդ խնդիր կարգադրելու համար:

Այդպիսի նախատախից ատենաբանութիւն մը արդէն ինքնին հակառակուրդ կուտակցութիւնը գրգռելու եւ կոտել հրապարակ գիտում չունէ՛ր միթէ:

Եթէ ձեր թղթակցը ճշմարտութիւնը կը սիրէ, ինչո՞ւ լուտութիւն կը պահէ այնպիսի իրողութիւնների վրայ ուրոնք բացարձակ կը յայտնեն թէ հանդէսէն դեռ բաւական առաջ խոտովութիւն հանելու խորհուրդ ունէին աւանդ որոնց ձեր թղթակցը «յառաջ-գիմական» մակդիրը կը չտայէ առատութեւ, եւ ատիկա պարծանքով կը լըսէ՛ն ամէնքին: Յարմար պատրուակը գտան իմ թղթակցութեանս մէջ, ինչո՞ւ յաղթանգամ մարդու մը ուղիղէր արձակելը կը յիշէ որ տեղի ունեցաւ բակին մէջ եւ զանց կընէ իր մեծերէն զայս առաջ տղու մը միւսէն առաջ ընկողնէր պարպելը նոյն իսկ սրահին մէջտեղը:

Խոտովութեան առիթ տալ եւ յետոյ զայն ուրիշների վրայ ձգել՝ այդ գովելի բան չէ:

ԼՐԱՔԱՂ

Վեհ. Կաթողիկոսը Գանձակէն վերադարձած է Էջմիածին ուր ընդհուպ պիտի կատարուի Տ. Երեմեան Գէորգ վարդապետի եւ պիսկոպոսական ձեռնադրութիւնը: — Գէորգ վարդ. Երեմեան ի Կանձակ Հայրապետին ի պատիւ

տրուած հացկերոյթին մէջ ֆռան, սերէն լեղումով ճառ մը խօսեր է որ մեծ տպաւորութիւն ըրած է օտարազգի ունեղիւններուն վրայ: Պորձնական արդիւնքը սա եղած է որ ատենախօսը 1000 ր. նուէր ստացեր է ի նպաստ Երուսաղէմի:

— Մօսկուայի մէջ մեր ազգակիցները վարդանանց տօնին առթով երեկոյթ մը կազմակերպել են թատերական—երաժշտական, Ներկայացուած է դերմանական խաղ մը Գարոնեանի «Պաղտոսար ուրբար»ը: «Իմ սիրելի զաւակունքս» Վերդերիս մէջ միշտ սգազգեացի՝ եւ ուրիշ բանաստեղծութիւններու երգեցողութիւնը մեծ ոգեւորութիւն առաջ բերած է հանդիսականներուն մէջ: Երեկոյթին յաջորդող պարերը տեւած են մինչեւ տաւառ:

— Հանրաժողովուրդը Բաղրաշահի Նաստեղծ Երազելիան մտադիր է կովկասի Հայոց Ռարեդ. ընկերութեան յանձնել մօտ 8000 ր. գումար մը, որ հաւաքուած է վեց տարի առաջ բանաստեղծին 30 ամեայ յորեւեանին առթով: Ընկերութիւնը առանց դրամադիւնի դպչելու, անոր սովորով պիտի օգնէ կարօտ հայ գրագէտներու:

— Բագուցի Հայերը նոյնպէս ունեցեր են իրենց հայկական երկրոյթը վարդանանց տօնին օրը: Հասոյթ 6000 րուպլի:

— Կ. Պօլսոյ ազգ. խառն ժողովը որոշեր է Սահմանադրութեան վերաքննութեան գործը ստիպողաբար շարունակել ու վերջացնել: Ասով վերջացած պիտի ըլլայ Սահմանադրութիւնն ալ՝ գոնէ իր ամէնէն էական եւ կարեւոր կէտերուն մէջ, ու յիշատակ մը պիտի պիտի մնայ, որովհետեւ խնդիրը իսկապէս վերաքննութեան խնդիր չէ, այլ կուզուի վերաքննութեան քողին տակ, նոյն իսկ Սահմանադրութիւնը, թրքահայութեան այդ ազգ. հիմնարկութիւնը, որ շտտոնց փուշ մը եղած է բարձր չըջանալներու աչքին, քանզի ու թաղել նոյն իսկ Հայերու ձեռքով: Կիլիկիոյ խնդիրը լուծեցին, Ս. Ալէքսանդրեանի ընտրութիւնը ապօրէն հրատարակելով, հիմայ Սահմանադրութեան խնդիրը լուծելու կարգն սկսած է այդ հերոսներուն համար:

— Ատանացի հանգուցեալ տիկին Մարգարիտ, այրի հանգուցեալ Թովհանէս Տէր-Առաքել Պատիկեանի, հազար ոսկի աւելի կտակեր է ազգ. հաստատութիւններու:

— Վանի միսիօնարները հազուապէս եւ սերմոյն զատ 1224 եղ ընտրած են ազգատանհատներու, վանքերու եւ գիւղերու: Միսիօնարներու հովանաւորութեան տակ կը պատասպարուին երեք հարիւր երկսեռ որբեր, որոնք հայրենի աղօթքներէ զատ շարականի երգեցողութիւն կը սորվին, կանոնաւորապէս ազգ.

եկեղեցին կը յաճախեն և պարբերաբար կը խոստովանին ու կը հաղորդուին :

—Արմենիայի մէջ կը կարգանք թէ Նիգոսիոյ (Կիպրոս) հայկական կրթարան—Որբանոցին բացումը կատարուեր է փետր. 6ին շքեղ հանդէսով մը որուն ներկայ գտնուելի է նաեւ Կիպրոսի վարժարանաց ընդհ. Տեսուչ Տ. Սրէնսը, իննամեայ ժամանակամիջոցի մէջ որբերը շատ գոհացուցիչ յառաջդիմութիւն ունեցած են : Հանգէսին ոգեւորիչ տպաւորութեան ներքեւ թաղ. խորհուրդը ձեռնարկած է հանգանակութեան մը ինպատ որբանոցին : Ինչպէս յայտնի է, անգլիաբնակ ազգայիններու նախաձեռնութեամբ հիմնուած այս հաստատութիւնը կը գտնուի Տ. Վահան Գիւրքեանի տնօրինութեան ներքեւ որ կը խոստանայ յոյժ արդիւնաւոր ըլլալ :

Տեղաբնակ երթեւեկ աշակերտներէ վատ կրթարան—որբանոցին մէջ կը խնամուին 23 գիշերօթիկ աշակերտներ, որոնց 10ը թոշակաւոր են, Տարեկան թոշակը 12 անգլ. ոսկի է, ամէն տեսակ ծախքերու փոխարէն : Կարեւոր ուսումներէ վատ աշակերտները կը սովորին ատաղձագործութիւն, կոշակարտութիւն, գերձակութիւն և շերտմապահութիւն :

—Ինչպէս կանխաւ ծանուցած էինք, հանգուցեալ Տ. Մկրտիչ Տէրունեանի գերեզմանին վրայ հուղանգիւստ կատարուեցաւ երկսեռ խումբ բազմութեան մը ներկայութեամբ : Կաթ. այցելու հովիւ Տ. Արսէն վարդ. վեհապետ այս առթիւ յուզեալ շնչոտով բանաստեղծութիւն մը ըրաւ ի պատիւ ողբացեալ վարդապետին յիշատակին :

—Մեր վերջնական թիւով Տ. Մինաս Չերազի Հայկ. Կեդր. Միութեան նախագահութենէ հրաժարելը ծանուցանելու առթիւ մոռցած ենք յիշատակել թէ Միութեան քարտուղար Տիար Քալայեան և համարակալ Տիար Գալփազեան կը շարունակեն իրենց պաշտօնավարութիւնը :

—Քարիզէն կը գրեն մեզ թէ հայկական մատուռին հոգաբարձութեան նոր ընտրութիւն մը կատարուեր և անգամ ընտրուեր են Տիար Լաթիֆեան, Յովսէփեան, Գարակէօզեան, Արթուրեան և Թորգոս : Սըգընան :

—Նոյն քաղաքի Հայ Ուսանողաց ընկերութիւնը ինպատ աղքատ հայ ուսանողներու երեկոյթ մը կը կազմակերպէ որ մօտ օրեր տեղի պիտի ունենայ : Երեկոյթը պիտի բաղկանայ նուագահանդէսէ և պարահանդէսէ մը, այս վերջինը պիտի սկսի կէս գիշերէն ետքը :

—Յաւալի լուրեր կը շարունակեն հասնիլ փ. Պօլսէն : Կը գրեն

մեզ թէ փետր. 19ի գիշերը, ժամը 9 1/2ին, վարժարանի տնօրէնին պատահան իվեր ատրճանակ մը պարպուեր է փողոցէն, ինչպէս կերելի վարժանիւն համար զինք՝ ինչպէս և իր եղբայրը, նոյնպէս վարժապետ, որ հրաժարին իրենց պաշտօնէն : Այս դէպքէն երկու օր ետքը պատարագիչ քահանան անտորագրի թաց նամակ մը ընդունած է, որով անոր իմաց կը տրուէր թէ բռնի սեղանէն վար պիտի առնուի, եթէ համարձակի կիրակի օր պատուազել :

—Թուրք լրագիրներ կը գրեն թէ Կ. Պօլսոյ եղեռնագոյտ ատենը 5 տարուան տաժանակիր աշխատութեան դատապարտած է Միսաք անուն հայ մը որ ամբաստանուած էր իբր անդամ հայ խուժարաններու խմբին :

—Կաթ. այցելու հովիւ Գեր. Արսէն վարդ. վեհապետ երկուշաբթի մեկնեցաւ Վառնայէ : Ռուսոք երթալու համար ուրիշ մօտ ժամանակ պիտի անցնի Աւստրիա, որուն նոյնպէս այցելու հովիւ կարգուած է Էթիոպիոյ հրամանով :

«ԻՐԱՆԻՆՔ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Մեր քանի մը բաժանորդներուն կողմէն մեզ եղած հարցումներուն ի պատասխան կը յայտարարենք թէ Շարժումի հետ պաշտօնակցի լոկ բարեկամական յարաբերութենէ վատ, ու է ներքին կապ կամ վարչական առնչութիւն չունինք թէ հետեւապէս իրաւունք և Շարժում բոլորովին զատ և իրարմէ անկախ տնօրինութեանց ներքեւ կը գտնուին :

—Քանի մը յօգուածագիրներու որոնք քիչ մը սրտնեղած շեշտով մեզ կը հարցնեն թէ ինչո՞ւ համար իրենց գրութիւնները անփոփոխ չենք հրատարակեր, կը ստիպուինք յիշեցնել սա տարրական ճշմարտութիւնը թէ ընթերցող չպիտի կրնայինք գտնել, եթէ մեզ զրկուած ամէն գրութիւն առանց ընտրութեան և անփոփոխ հրատարակէինք :

ԽՅՐԾՈՂՆԵՐՈՒՆ

Մեր վերջին թիւով «Ընդհանուր պաշտօն» խորագրին ներքեւ հրատարակեցինք մեր փ. Պօլսոյ թղթակցին մէկ գրութիւնը որ պատասխանութեանց առթիւ եղեր է մեզ դէմ, որովհետեւ Պուրկաղի Միութեան կանխորոշուած հաւանակ էր գրութիւնը, որովհետեւ յայտնի եղեր է թէ մեր թղթակցը թունդ դաշնակցական մէ, որովհետեւ... պէտք չէր տեսնուէր անտեղի որովհետեւներու շարքը ի զուր երկընդնաբերու և խօսք հասկցողներուն բացորոշապէս կըսենք. Հերքում մը հրատարակել ետքը, անոր պատասխանն ալ պարտական էինք չի մերժել, ինչպէս պատրաստ ենք հրատարակել եթէ ներք-

քու մին հեղինակ Տ. Արմալի Մուրատեան ուզէ մեզ զրկել գրութիւն մը մեր թղթակցին բաժնէն ջրելու համար : Երկու կողմը մտիկ ընել մինչեւ որ խնդիրը բաւական լուսաբանուի, այս է մեր բրածը : Անկողմնակալութիւնը ուրիշ կերպ չենք կրնար հասկնալ : Հակառակադասներուն այսինչ կամ այնինչ կուսակցութեան պատկանելի չալ ընառն շնչանալով ինչ չունի մեզ համար : Կարեւորութիւն ունեցող բանը մեզի համար միմիայն այն փաստերն են որոնք երեսուն կը ընդունին հակառակադաս գրութեանց մէջ :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Եւրոպական մամուլի մէկ մասը շատ հաւանական կը համարի պատերազմի ծագումը Միացեալ Նահանգներու և Սպանիոյ միջեւ : Մէյնի քննիչ յանձնաժողովը կը շարունակէ գաղտնի կատարել իր քննութիւնները : Հանրային կարծիքը շատ յուզուած է Միացեալ Նահանգներուն մէջ և կառավարութիւնը անդու պատրաստութիւններ կը տեսնէ պատերազմի պարագային համար :

Նիւ-Եորքէն Մատրիտի Գոռնաքոնտեմիա լրագրին տրուած հեռագիր մը կըսէ թէ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը Սպանիայէն պիտի պահանջէ վերանս հատուցում մը Մէյն մարտանալին համար, ինչպէս և Գոռնաքոնտեմիայի անկախութիւնը :

—Քուպայի ապստամբապետները իրենց զինուորական ուժերու մասին տեղեկագիրներ զրկեցին Ուաշինկթըն, ինչպէս նաեւ յատակազրի մը իրենց ապագայ գործակցութեան Ամերիկեան բանակին հետ : Սպանիոյ դէմ :

—Կաթ. Տիւմէթի և Ալպէն Միթիւ, երկու Ֆրանսացիներ, մէկը խմբագիր, միւսը արուեստագէտ, գրաւ դրած են առանց սանթի մը իրենց զրպանէն ծախք ընելու, աշխարհի շրջանը ընել և իրենց այցելելիք քաղաքներուն աղքատներուն 10000 ֆռ. բաշխել : Այս պարոններ երգելով և իրենց մէ մէկուն յօրինած խաղերը ներկայացնելով պիտի շահին իրենց ուղեւորութեան համար հարկաւոր գրամը : Ֆրանսայէ, Պէլիկայէ, Գերմանիայէ և Իտալիայէ անցնել և աղքատներուն ցարգ 3800 ֆռ. բաշխել ետքը, հասեր են Կ. Պօլսի :

—Իտալացի գիտուն մը Մ. Ամէլինօ Ապիտոսի մէջ (Եգիպտոս) գտած Գրիստոսէ առաջ Երգ դարուն մէջ ապրող Ոսերիս Բ. Թագաւոր—չաստուածին դամբարանը :

—Նիկէի խնդիրը որ պահ մը սուր հանգամանք առնել կը սպառնար՝ տակաւին բանակցութեան առարկայ է անգլիական և ֆրանսական պատգամաւորներու միջեւ : Բանակցութիւնները առժամապէս ընդհատուեցան երկու ֆռանսա-

յի պատգամաւորներու հիւանդութեան պատճառով :

—Ռուսիոյ մէջ ջանքեր կը լլան ուսական ազդեցութիւնը զօրացնելու հապէշիստանի մէջ : Ռուս պաշտօնեաներ, վարժապետներ և այլն շարունակ հոն կերթան Նեկու Սինիլիքի տրամադրութեան ներքեւ գնելու իրենց ծառայութիւնը :

—Ամերիկացի միլիարտատէր Ջորճ Կուլտ պալատ մը շինել կուտայ որ աշխարհի մէջ մէկ հատիկ պիտի ըլլայ իր ներքին սաղաթով և արտաքին երեսին պատշգամով : Ասոնք ոսկիէ պիտի շինուին և պիտի արժեն հինգ միլիոն ֆրանք : Ստոգիւ ալ անմտութիւն է զարմանալ թէ ինչպէս ընկերվարական և անիշխանական հոսանքը երթալով կը դօրանայ քաղաքակիրթ երկիրներու բնակիչներուն աղքատ մեծամասնութեան մէջ :

—Եւրոպական ներդաշնակութեան մէջէն յոյժ աններդաշնակ խաղեր լսուելու վրայ են : Անգլիա կսկսի սպառնական դիրք մը առնել : Բրիտանական ծովակալութեան պետը, Կոչըն, խորհրդարանին մէջ կարգ մը բացատրութիւններ տուաւ նաւատորմին այժման վիճակին վրայ և իր խօսքը վերջացուց ըսելով. Եթէ, Աստուած տայ, խաղաղութիւնը պահպանուի, պէտք է որ պատուաւոր խաղաղութիւն մը ըլլայ, իսկ եթէ, Աստուած չընէ, պատերազմ ծագի, պէտք է ջանանք ու մաղթենք որ յաղթութեամբ վերջանայ : Կոչըն յայտարարեց նաեւ որ պատերազմի պարագային մէջ Միջերկրականէն երկու մարտանաւ ալ պիտի երթան Չինական ջուրերու անգլիական նաւաբաժինը զօրացնելու : Բէքինէն Աթանու Ռիպերի զարնուած հեռագիր մըն ալ կիմացնէ թէ անգլիական դեսպանը չինական կառավարութեան բողոքներէ Բօրթ-Արթիւրի ուսական գրաւումին դէմ, առարկելով որ ծայրագոյն Արեւելքի հաւասարակշռութիւնը խանգարուած է ատով : Թայվոկ կը յայտարարէ թէ խրիմի պատերազմէն ի վեր բրիտանական ժողովուրդը իր շահերը զէնքով պաշտպանելու երբեք այնքան տրամադրութիւն և եռանդ ունեցած չէ որքան հիմայ : Ապահովապէս քաղաքական հորիզոն պայծառ չէ :

—Յարին մէկ Ուրազը ծովային նախարարութեան տրամադրութեան ներքեւ գրած է 90 միլիոն ուսալի նոր մարտանաւերու շինութեան համար :

—Մեզիոյ թագուհին Նիս գընաց օգտփոխութեան համար :

Ի Խ Թ Ա Ր

Պաղը սէպտեմբերէն տօլայը՝ պու կիւնքի նիւսխէմիզին թիւրք. ճէ զըսմը մէճպուրի տէօրտիւնճիւ սահիֆէյէ նազլ օլունմուշ տըր :

ՏԱԽԼԻՅԷ

Մ'առնէմք իսկ իսկապէս
օրուստուգունա կէօրէ, բընն
հաղթէթէրինին վալիտէսի բընն
սէս Գլէմանթին՝ տիւշար օլտու-
ղը հասթալըգտան պու տէֆա
շիֆայայ օլմուշ տըր:

Վիւքէլա բէյիսի Մ. Սթօլո-
ֆըն՝ խաթալըղընը թէտալի իթ-
տիրմէք իշին եազընտա էվրօթա-
յա կիտէճէյի բիվայէթ օլու-
նըյօր:

Սօֆիատան Բարիզէ վերելմիշ
օլան պիր թէլէկրաֆ՝ Մակեդոնի-
այա խուսուսի պիր թէֆթիշ գօ-
միսիօնը կէօնտէրիտիքտէն սօն-
րա տախի օրատա տէվամ իթ-
մէքտէ օլան զուլմ ու թէլէկրաֆ
իւլէրինէ թէքրարէն Պապը Ալի-
նին տըգգաթընը տալէթ իթմէք
իւլէրէ Սօֆիա հիւքիւմէթինին՝
Սթամպուլ մալահաթկիւզարը Մ.
Մարգօֆա թալիմաթ կէօնտէրմիշ
օլտուղընը խապէր վերելյօր:

Կազէթալարն պէյանընա կէօ-
րէ, հարպիշէ նազըրը Մ. Ի-
վանօֆ կէլէն հաթթա տէֆաթէն
էրքեանը հարպ մէճիսինի թէ-
ճէմիւ իթմիշ օլուպ, իւք պէհարտա
վուզուի միմքին օլան բօլիթիդա-
ճա գարըըզըզարա գարը Պուլ-
կար օրտուսընըն իհթիյաթէն հա-
զըր պուլունմասը լազըմ կէլտիյի
գարարկիր օլմուշ տըր:

Պու սէնէնին եէնի ասքէրլէրի
փետր. 20տէն ապրիլ 20յէ գա-
տար թօրլանաճազար տըր: 1897
սէնէնիտէ տօղմուշ օլան տէլի-
գանլըլար վէ կէլէն սէնէ պիր սէ-
նէ միւտտէթ իշին ասքէրլիքտէն
սէրպէթ պըրազըլմը օլանլար
շաղըրլաճազար վէ կէօնիւլիւլէր
տախի գապուլ օլունաճազարտըր:
Եէնի հազըլաճազ ասքէրլէրին եէ-
քիւնիւ կէլէն սէնէտէն 2000 քի-
շի զիյատէ օլաճազմըշ տըր:

75 թապուր թիւրք ասքէրլինին
Պուլկար սինօրլարընա հազըն
կէօնտէրլիմիշ օլաղընա վէ թէ-
սալիատաթի թիւրք օրտուսընըն
տախի Պուլկարիա հուտուլարը
հազընընտա թէվզի օլաճաղընա
տայիր Պուլկար հիւքիւմէթի մա-
լիւմաթ ախպ իթմիշ օլտուղը
Սօֆիատան էվրօթայա չէքիւմիշ
պիր թէլէկրաֆ հապատիսաթըն-
տան տըր: Պու սէպէպէ Սօֆիա-
տա Բընն հազըթէթէրինին էվրօ-
թատան պիր ան էվզէլ ալտէթի-
նէ պէքլէմէքտէ տիր քի շու հալ-
տէ լազըմ կէլէն թէտալիլէր իթ-
թիլազ օլունսըն:

Կէլէն նիւսիւմիկտէ՝ Սթան-
պուլտա նէշր օլունան Նօվիկի կա-
զէթասընըն սահիպի իմթիյաղը
Մ. Մակէթոնսքինին վէֆաթը-
նըն խապէրլինի վէլմիշ իտիք:

Պու տէֆա Սօֆիատան ալընան
խապէրլէրէ կէօրէ, շէհրի մէզ-
քիւրաէ նէշր օլունան վէ հէր բար-
թիյէ տայիա պուլընան պուլկար
կազէթալարընըն մուհարիլէրի
պիրթաթիլըլա հիւքիւմէթի տէքէք,
միւթէվէֆայի մուճալիշին իս-
թիւրահաթըր ըուհու իշին Սօֆի-
անըն Մայր հիւքիւմէթինտէ հո-
գիհանգիստ իճրա իթտիրմիշլէր
տիր:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԷ

Պէրլիմէր Թալիկալաք կազէթա-
սընըն պէյանընա նազարէն էվ-
րօթա հիւքիւմէթիլէրի՝ Կիրիտ մէ-
սէլէսինին հալ ու թէսլիյէսինի
տօղրուտան տօղրույա շարգ մէ-
սէլէսինտէ մէնֆաթըր օլան տէվ-
լէթէրէ հէվալէ իտէճէքլէր տիր:
տիկէր տէվլէթիլ իսէ՝ պունտան
պէօյլէ միւտտալէլէ իթմէյէճէքլէր
իմիշ:

Ռուսիա հիւքիւմէթի, Պապը
Ալինին միւրահաթթընա բաղմէն
1200000 թազմինաթը հար-
պիշէ եւրինէ շիմտիլիք 700000
լիւրա թէլէտիյէսինին միւտտաթէ
իթմիշ տիր:

Պապը էվրօթա կազէթալարընըն
վէրտիլէրի հապատիսէ նազարէն՝
էրմէնի գօմիթէլէրի՝ Էրմէնիս-
թանտա տէվամ իթմէքտէ օլան
զուլմ ու զարաղըն պիր ան էվզէլ
էօնիւնիւ ալմադ իշին տիւլէյի
էճնէպիյէ էլիլէրինէ բրօթէթօ
գըլըզը պիրէր պէյաննամէ կէօն-
տէրմիշլէր տիր:

Ռուսիա հիւքիւմէթի՝ պէրայի
թաամիր քէնտի Ագտէնիլ տօ-
նանմա վարօրլարընըն ճարտա-
նէլտէն կէլիպ գարտաթէնիլտէ-
քի ուու թէրտանէլէրինէ կիթ-
մէք իշին թիւրք հիւքիւմէթի-
նին միւտտաթէնին էլտէ իթմէյէ
զայրէթ իթմէքտէ իմիշ: Անճազ
սօն պիր թէլէկրաֆա նազարէն
իշպու զայրէթիլտէ մուվաֆազի-
յէթէ նախ օլմայօր ըմըշ:

Խուսուսի պիր թէլէկրաֆանա-
զարէն, Կիրիտ սուլարընտա պու-
լընան ամիրալար՝ մուլթէլիֆ
մահէթմէ թարաֆընտան վէրիլէն
գարարլարըն իճրասը պազը մա-
հալլէրտէ միւլքիւլաթա թէսա-
տիւֆ իթտիլիլտէն, ումուլ մա-
տայը մուլթէլիֆ տիվանը հար-
պըն հիւքիւլ ալթընա ալընմասը-
նա գարար վէրմիշլէր տիր:

Անտուլու սէր միւլթէթիլիշի
Շաքիր բաշանըն վիլայէթիլէրտէ
իճրա իտիլմէք իւլըրէ պազը իս-
լահաթլարը միւլպէլին պիր բա-
բօրթօ թանիլիլ իտուպ Սուլթանս
թապտիմ իթտիլի Մօնիթօնտէ
օգունմըշ տըր:

Արթըր պու բարօրթօ իւլէրի-
նէ իալահաթըն պէհէմէհալ իճրա

իտիլէճէյիլէն շիւպէ օլունապի-
լիւր մի հա:

Կէլէնէլէրտէ Գաննայա կիտէն
պիր թիւրք եէլքէն կէմիսի իւլէ-
րինէ Կիրիտիլէր ալթէլ իթմիշլէր
վէ անը պալթըրմազ իսթէմիշլէր
իսէ տէ, թիւրք ասքէրլէր հար-
տըմա կէլէրէք հիւճմ իտէնլէրի
տալըլթմըշլար տըր:

Եւլաղ քէօշկիւն միւլթէվի-
ճի էֆքեարը առա օլունան Մա-
լիմաք կազէթալար էվրօթա կա-
զէթալարընըն թիւրքիտա հիւքիւ
իտէն նիկալմալըլազ վէ գուլուլա
րա տայիր վէրտիլէրի հապատիս-
լէրին հէֆսինի տէ թէքլիպ իթ-
մէքտէն պաշապ պիր շէյ հալմա-
յա միւտտաթէնի գալմայօր: Շու-
ոըրա պա խուսուս պուլկար կա-
զէթալարըն Մաքէթոնիտան ա-
լըպ նէշր իթտիլէրի մալիւմաթը
հէր կիւն թէքլիպ իտիւպ անլէրէ
գարըն շէտիտ պիր լիսան գուլ-
լանմադտա, թաւն վէ Նօշ վէ սա-
լիր կազէթալար իւլէրինէ հիւքիւ
իտէրէք, թիւրքիայա գարըն
ապա հիշ պիր շէյ հալմազա
հազըլարը օլմաթըղընը իտտա
վէ առէթա թիւրքիա հազ
գընտա սիւքիւթ իթմէլէրինի
թալէպ իթմէքտէ տիր: Էօթէր-
սէ՝ էյի տիւտիւլ:

Թիւրքիա վէ Եունանիսթան
պէյնիտէ ազա օլունաճազ պազը
թիւրքիայի վէ սայիր ահանամէ-
լէր հազընտա թալիմաթ ախպ
իթմէք իշին Եունանիսթան հէյ-
յէթի մալսուսէսինին իքիւնի ա-
զապը Մ. Սթէֆանօ Սթանպուլ-
տան Ալիինայա աշիմէթ իթմիշ
տիր:

Պապը Ալի թիւրքիանըն տիկէր
մահէլլէրի կիպի թէսալիտա գօ-
լուն պաշընա 50 բարա վէրիի ա-
լընմասընը լազըմ օլան լէսի մա-
հալլէրէ էմր էլիլմիշ տիր: Տէմէք,
թիւրքիանըն հազընտա քէնտի
ասքէրլինի թէսալիտան չէգար
մազ նիլէթիլտէ պուլունմայօր:

Օտէստա պիր թիւրքիա ա-
ճէնթէսի թէհէսի իթմէք իւլըրէ,
հապէշիսթան հիւքիւմաթը Մէ-
նէլիքէ Բուսիա տէվլէթի թարա-
ֆընտան բուսիսաթ վէրիլմիշ վէ
իլէրիտէ Բուսիանըն տիկէր շէհր-
լէրինտէ տէ պիրէր աճէնթէ թէհ-
սիսինէ բուսիսաթ վէրիլէճէյի վա-
տ իտիլմիշ տիր: Պունա մուգապիլ
Բուսիա տալիի հապէշիսթանըն
պազը շէհրլէրինտէ աճէնթէլէր
թէհէսիս իտէճէք տիր: Գօնթ լէ-
օնթիլէվ Օտէստան Ճիպուլթիլի-
մանընա գատար վարօր իլլէթմէք
թէքլիֆինտէ պուլունմըշ իսէ տէ,
Բուսիա վարօր գուլմանիտա պու
թէքլիֆի բէտա էլլէմիշ տիր:

Շու սօն կիւնլէրտէ Մակեդո-
նիաառա վուզու պուլան գարը-

շըղըլալարտան տօլայի՝ թիւրք
հիւքիւմէթի թալաթընտան մա-
հալը մէզքիւլէ պիր թէֆթիշ գօ-
միսիօնա կէօնտէրիլմիշ իտի:
Մէլքիւր զօմիսիօնու պու տէֆա
վէրմիշ օլտուղու բարօրթօյա
պազըլըրտա՝ Պուլկարիսթանտան
Մակեդոնիայա պիր շօգ սիւհ
կէօնտէրիլմիշ վէ Մակեդոնիա է-
հալիսինտէն պիր շօղու կէօնիւ-
լիւ հալըլմըշ ըմըշ: Մէլքիւր
գօմիսիօնու գարարըլա հապա-
խանտէ պուլունան 463 ֆէստա-
ճըլար սալը վէրիուպ, հալընը
6 բէիւլէրի ալը գօնուլուշ տըր:

ՄՈՒՀԻՄ ԻԽԹԱՐ

Պունտան պէօյլէ թարաֆըրգա
կէօնտէրիլէճէք ապօնէ պէտիլէրի-
նի վէ քէառիլիտիւ մէքքոպ-
լարը մուվազաթ պիր միւտտէթ
իշին ալթիտէքի առէսլէ կէօն-
տէրմիշլէրինի կազէթալար ապօն-
լէրինտէն վէ մալահաթկիւզարա-
րընտան խասթէթէն բէճա իտէ-
րիլ:

Г. М. СКОЛОВЪ за в. «Иправникъ»
Варна.

Եւրօթա

M. Mihan Sconian
pour la Rédaction du journal
„Ipravunk“. — Varna.

Սարի առի մէքթուպ, կազէթա
վէ սարիէ եինէ էվլէլէրի կիպի
տօղրուտան տօղրույա կազէթալար-
ըն պաշընտա կէօնտէրիլէն մալ-
պառա տարէսինէ կէօնտէրմիշ տիր:

ԶԱՄԻՐԻ ԲԻԱՅԱՍԸ

Վառնա 3 Մարտ

Պուլտայ
Վալօն, լիպրա 47-51, հէքթօլ-
8.10-8.60 ֆրանք
Արապա, լիպրա 47-55 հէքթօլ-
8.50-41 ֆրանք
Արբա
Լիպրա 38-41, հէքթօլ 4.60- 4.80
ֆրանք

Մըսըր
Վալօն, լիպրա 57-58 հէքթօլ-
5.50-5.70 ֆրանք
Արապա, լիպրա 57-61 հէքթօլ-
5.80-8 ֆրանք

Ճաւաղնա
100 օգգաթը 19-24 ֆրանք՝ մալա
կէօրէ
Արապա մուլմէլէսի՝ Նաթօլէն
24 ֆո. հիսապը իլէ տիր:
Կիւնտէ 2-3 Վալօն վէ 5-6
արապա պուլտայ, 3-5 արապա
արա, 4-5 Վալօն վէ 8-10
արապա մըսըր կէլմէքտէ տիր:

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պուլկարիլէն սարվիլ փափագոգ-

նիւր՝ առաջնորդ ունենալով իրենց
սոյն քերականութիւն՝ կրնան վեց
ամսուան մէջ կարգալ գրել և խօ-
սիլ: Կը ծախուի ֆ. Պօլիս, թըղ-
թալաճառ. թաղար. Գ. Հինտիանի
մօտ:

Գիւնն է՝ ընտիր կապ, հրահանգ-
նիւր և բանալին մէկտեղ, 6 լէվ.
թղթալազմ, առանց բանալիի 4 լէվ.
առանձին բանալին 60 սանթիմ:

Միւլաքանակ գնողներուն մաս-
նաւոր զեղչ կըլլայ:

Կը ծախուի նաեւ ի վառնա
գրալաճառ Տ. Զարպիսանլէրանի
մօտ: